ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«02» 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000679

Ձեռնարկողը՝ ***«Վիկարտ» ՍՊԸ***
ք. Կապան, Թումանյան 9/3

Գործունեությունը՝ ***Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի/բացահանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000079

<< 02 >> 10 2020թ.

Սյունիքի մարզի Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի բացահանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «Վիկարտ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր /Ա կատեգորիա/

Տեղադրման վայրը՝ Սյունիքի մարզ, քաղաք Կապան

«Վիկարտ» ՍՊԸ-ն նախատեսում է Սյունիքի մարզի Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրից հանածոյի արդյունահանում:

Նկարագրական մաս. Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրը գտնվում է Կապանի վարչական տարածքում, Ողջի գետի ողողահունում և զբաղեցնում է 0.7հա տարածք 746,5-747մ բացարձակ բարձրությունների վրա:

Նախագծվող հանքի եզրագծում ներփակված հաշվեկշռային մարվող պաշարների ծավալը կազմում է 556.243մ^3 /27 տարվա համար/ ավազակոպճագլաքարային խառնուրդ, այդ թվում՝ 25.423մ^3 ստատիկ և 530.820մ^3 դինամիկ պաշարներ:

Հանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 25.423մ^3 մարվող և 19.660մ^3 արդյունաբերական խառնուրդի զանգված, բնամասերում թողնված կորուստները կազմում են 5.763մ^3: Նույնքան զանգված վերականգնվում է յուրաքանչյուր տարում՝ /վերականգնվող խառնուրդի զանգվածը տարեկան կազմում է 25,42հազ մ^3/:

Կապանի ԱԿԳԽ հանքավայրի պաշարները C1 կարգով 25.423մ^3 քանակով հաստատվել են ՀՀ ԷԵԲՊ նախարարության աշխատակազմի և ընդերքի գործակալության պետական փորձաքննության 2018թ. սեպտեմբերի 14-ի N6 եզրակացությամբ:

Հանքավայրի կոորդինատները ARM WGS համակարգով՝

1. Y=8623400 X=4341766
2. Y=8623467 X=4341787
3.Y=8623535 X=4341800
4.Y=8623632 X=4341809
5.Y=8623640 X=4341795
6.Y=8623596 X=4341769
7.Y=8623399 X=4341753

Ելնելով հանքավայրի տեղադրման լեռնաերկրաբանական պայմաններից՝ նախագծում ընդունված են հանքադաշտի հետևյալ պարամետրերը.

- Հանքադաշտի առավելագույն երկարությունը մակերևույթի վրա - 243մ;
- Հանքադաշտի առավելագույն լայնությունը մակերևույթի վրա - 37մ;
- Հանքադաշտի մակերեսը մակերևույթի վրա - 6900մ^2 (0,69հա);
- Ավազակոպճային խառնուրդի միջին հզորությունը – 3,7մ:

Բացահանքի բացումը իրականացվելու է տեղամասի հարավ-արևելյան սահմանում կտրող խրամի անցմամբ: Կտրող խրամի լայնությունը հիմքի մասում ընդունված է 2մ, միջին խորությունը՝ 3,6մ, երկարությունը՝ 16մ:

Քանի որ, հաստաշերտի հզորությունը փոքր է, արդյունահանման աշխատանքները կատարվում են տեղում առկա 1,0մ^3 շերեփի տարողությամբ հակառակ բահ ЭО-4124 մակնիշի էքսկավատորով ներքևից շերեփումով (ամբողությամբ կապահովի անհրաժեշտ արտադրողականությունը՝ 192մ^3/հերթափոխ), էքսկավատորին սպասարկելու է մեկ Т-130 մակնիշի բուլդոզեր: Սկզբում կատարվելու է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին (առաստաղին)՝ օգտակար հանածոյի ջրազրկման նպատակով, որից հետո իրականացվելու է ջրազրկված օգտակար հանածոյի կույտի բարձումը տրանսպորտային միջոցների մեջ:

Բուն հանքավայրի տարածքում հողաբուսական շերտը բացակայում է, քանի որ հանքավայրը գտնվում է Ողջի գետի ողողահունում և հանդիսանում է վերականգնվող պաշարներով հանքավայր:

Ընդհանուր հանքային կորուստները, որոնք գոյանում են հանքադաշտի տարածքում գտնվող շենքերի և շինությունների տակ թողնվող պաշտպանիչ բնամասերից՝ բացակայում են, իսկ հանքակողային բնամասերում թողնվող կորուստները կազմում են 5.763մ^3: Կորուստները կազմում են ամբողջ (ստատիկ և վերականգնվող) պաշարի կտրվածքով՝ 1,04%:

Հանքի շինարարության ժամանակ նախատեսված են հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները՝

- Մոտեցող հողային ավտոճանապարհի կարգաբերում 8մ լայնությամբ, 5.600մ^2 մակերեսով,
- Դրենաժային առվի կառուցում բացահանքի հարավ-արևելյան մասից մինչև գետ՝ L=10մ, լայնությունը հիմքում 0,5մ, բարձրությունը՝ 3,6մ, V=41մ^3,
- Կտրող խրամի անցում՝ 69,5մ^3,

- Արդյունաբերական հրապարակի կառուցում՝ 100մ^3,
- Մակաբացման ապարների հեռացում՝ 250մ^3՝ 100մ^2:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնում չի իրականացվում, քանի որ բացահանքի տարածքի պաշարները վերականգնվող են:

Վերականգնվելու է միայն արտադրական հրապարակը 100մ^2 մակերեսով /0.01հա/, մոտեցող ավտոճանապարհի վերականգնում, որոնց իրականացման համար նախատեսված է 323.1 հազ. դրամ:

Կապանի հանքավայրից ավազակոպճագլաքարային խառնուրդի արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացմանն ու շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է՝

- փոշիացումը նվազեցնելու նպատակով տարվա չոր և շոգ եղանակին կատարել ջրցանումը՝ օրը 2 անգամ,
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ եռամսյակային հաճախականությամբ,
- բացահանքում աշխատող տեխնիկայի շարժիչների վառուցքները կարգավորել՝ անսարք մեքենաների շահագործումը բացահանքում արգելել,
- մեքենաների շարժիչների գազերի արտանետման վրա տեղադրել կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ կտա կրճատել գազերի արտանետումը մթնոլորտ,
- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին երկու անգամ հաճախականությամբ,
- արգելել ավտոմեքենաների լվացումը Ողջի գետի ափամերձ տարածքում,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ դրանց պահպանման համար նախատեսված տեղից դեպի հավաքող փոսի ուղղությամբ, տարին երկու անգամ հաճախականությամբ,
- բացահանքի, լցակույտերի կողերի դեֆորմացիաների գնահատում՝ յուրաքանչյուր ամիս,
- թափոնները պարբերաբար դուրս բերել բացահանքի տարածքից և տեղադրել հատուկ նախատեսված հարթակներում կամ վաճառել,
- բացառել արտադրական հրապարակից դուրս լրացուցիչ տարածքների խախտումը և թափոնների տեղադրումը,
- իրականացնել հողերի աղտոտվածության մոնիթորինգ՝ տարեկան մեկ անգամ,
- նավթամթերքներով արտադրական հրապարակի հողերի աղտոտվածության մոնիթորինգ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,
- Ողջի գետի ջրերի մոնիթորինգ՝ տոպոհանութային աշխատանքների կատարման միջոցով ամիսը մեկ անգամ,

- բուսական տեսակների, աճելավայրերի, պոպուլյացիաների վիճակի փոփոխության վերաբերյալ իրականացնել սեզոնային նմուշառում տարեկան մեկ անգամ:

Մշտադիտարկումների իրականացման համար տարեկան նախատեսվում է ծախսել 210.0հազ. դրամ:

Խմելու և ջրցանի համար ջուրը բացահանք է բերվելու ավտոցիստեռներով՝ ըստ օրական պահանջվող ծավալի:

Հանքավայրի հարակից տարածքներում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բացահանքի տարածքում ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացին մասնակցել է առողջապահության նախարարությունը, Սյունիքի մարզպետարանը, կադաստրի կոմիտեն: Փորձաքննական գործընթացին ներգրավված փորձագետի կողմից տրվել է մասնագիտական եզրակացություն: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հաշվետվությունը լրամշակվել է: Նախնական գնահատման հայտի և հաշվետվության փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Սյունիքի մարզի Կապան համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ գործունեության իրականացման վերաբերյալ, որը հանրության կողմից արժանացել է հավանության:

Հանքավայրի հումքի արդյունահանումը չի խախտի գետի ընդհանուր բնական հիդրոլոգիական վիճակը և գետափի դիրքը, քանի որ կուտակը շահագործվելու է գետի ողողահունից, նրանում ջրհոսքի կրճատման կամ լրիվ չորացման պայմաններում: Այն չի խախտի նաև ավազակոպճագլաքարային նստվածքների նոր կուտակումներ առաջացնելու նպատակով արդյունահանված խրամներով գետի հոքսի մասնակի ուղղորդման դեպքում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված (ՀՀ կառավարության «Ընդերքօգտագործման հետեվանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշման համաձայն) շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

- Նախատեսվող աշխատանքներն իրականացնել համաձայն ներկայացված բնապահպանական կառավարման ծրագրի, բացառելով այդ ընթացքում ջրային հոսքի խոչընդոտումը կամ շեղումը, ջրային ռեսուրսի աղտոտումը, ջրային ռեսուրսի մեջ կեղտաջրերի արտանետումը, ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխումը:
- Բացառել նախատեսվող աշխատանքների իրականացումը ձկնատեսակների ձվադրման ժամանակահատվածում՝ ապահովելով ձկների բնական վերարտադրությունը:
- Նախատեսվող գործունեությունն իրականացնել սահմանված կարգով և ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո:
- Մինչև գործունեության իրականացումը փոխել հողերի նպատակային և գործառնական նշանակությունը՝ համաձայն Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Վիկարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի բացահանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Ամփոփեց՝ Հ.Մեսրոպյան